ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771 www.court.am

ԴԴ-1 Ե-11196

«30» **դեկտեմբերի 2022թ.**

«ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Հ. ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Տեքստիլագործների 29/3

Հարգելի պարոն Ահարոնյան,

Հայտնում ենք, որ համաձայն Դատական դեպարտամենտի ղեկավարի պաշտոնակատարի 21.12.2022 թվականի թիվ ԴԴ-1-Ե-10735 գրության, «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-ի կողմից մինչև 28.12.2022 թվականը ներառյալ պետք է կատարվեին Դատական դեպարտամենտի և Ձեր ընկերության միջև 14.06.2021 թվականին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-21/02» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) հիման վրա 19.05.2022 թվականի կնքված թիվ N 2 համաձայնագրով նախատեսված աշխատանքները, սակայն, մինչև 28.12.2022 թվականը ներառյալ չեն կատարվել վերը նշված աշխատանքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ 29.12.2022թ. Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՇԻՆԱՐԱՐ-97» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել՝ 818 405.83 (ութ հարյուր տասնութ հազար չորս հարյուր հինգ դրամ և ութսուներեք լումա) ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 72,425.30 (յոթանասուներկու հազար չորս հարյուր քսանհինգ դրամ և երեսուն լումա) ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Դատական դեպարտամենտը ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ. մասնավորապես՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել 2 870 670.8 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր յոթանասուն դրամ և ութսուն լումա) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել 4306006.2 (չորս միլիոն երեք հարյուր վեց հազար վեց դրամ և երկու լումա) ՀՀ դրամ, որպես որակավորման ապահովում:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Ա. Ասատրյան
Հեռ.010511777